



ԳՅՈՒՄԻԻ

2017

ՄԱՏՉԵԼԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Դուք ունե՞ք լսողության, տեսողության խնդիրներ, քայլելու դժվարություն կամ ողնաշարի վնասվածք, տեղաշարժվում եք անվասայլակով:

Այս խնդիրները չպետք է ձեզ խանգարեն վայելել ճանապարհորդության հաճույքները կամ օգուտները: Ճանապարհորդությունը բոլորի համար է, անկախ նրանից, թե ինչ կարողություններ կամ կարիքներ ունեն ճանապարհորդները:

Մենք նաև գիտենք, որ շատ մարդկանց համար, ովքեր ունեն հաշմանդամություն կամ մատչելիության, հասանելիության խնդիրներ, ճանապարհորդելու առաջին խոչընդոտը ինֆորմացիայի պակասն է՝ համակցված անհայտ վախի հետ: Հուսով ենք, որ ռեսուրսների այս հավաքածուն որոշակիորեն կլրացնի տեղեկատվության բացը և կմեղմի անհիմն վախերը՝ տրամադրելով օգտակար խորհուրդներ, ուղղակի տեղեկատվություն և հաշմանդամություն ունեցող անձանց ճանապարհորդությունը խթանող օրենքներ և կանոնակարգեր:



ՕԴԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐՆԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ



Արտերկիր ճամփորդությունը կարող է մարտահրավեր լինել նույնիսկ հաշմանդամություն ունեցող ամենաճարպիկ ճանապարհորդի համար: Ամենաարդյունավետ միջոցը անձնական փորձն է, որն օգնում է ձեզ սովորել թռիչքների, մաքսային ընթացակարգերի և օտարերկրյա պետություն մուտք գործելու այլ գործառույթների ռազմավարությունների մասին:

Նախապես պատվիրեք թռիչքներն ու միանգամից գանգահարեք ավիաընկերություն՝ համոզվելու, որ հաշմանդամության հետ կապված բոլոր պահանջները կապահովվեն ողջ թռիչքի ընթացքում: Հարցրեք յուրաքանչյուր անձի անունն ու պաշտոնը, ում հետ դուք կխոսեք, գրի առեք կամ ձայնագրեք այս տեղեկատվությունը:

Պայմանավորվածություն ձեռք բերեք դեպի օդանավակայան և օդանավակայանից դեպի տուն հասնելու համար: Շատ տրանսպորտային ընկերություններ, տաքսի ծառայություններ, օդանավակայանի տրանսպորտային միջոցներ (ավտոբուսներ, միկրոավտոբուսներ) առաջարկում են նմանատիպ ծառայություններ անվճար: Այս պայմանավորվածությունները ձեռք բերեք նախապես՝ ձեր թռիչքային պատրաստությունների հետ միասին, որպեսզի ժամանումից և մեկնումից առաջ խուսափեք շփոթմունքից և անհանգստությունից:

Ժամանեք օդանավակայան մեկ ժամ ավելի շուտ, քան սովորաբար պահանջվում է: Սա հնարավորություն կտա ժամանակ

հատկացնել հաշմանդամություն ունեցող ուղևորների սպասարկման համար հատուկ անհրաժեշտ ծառայություններին և խուսափել սահմանային, անցակետային գնումների և անվտանգության ստուգման այլ գործընթացների հետաձգումից:

Հաշվի առեք Ձեր թռիչքների երկարությունը՝ կախված հաշմանդամության հետ կապված կարիքներից: Երկարաժամկետ չվերթները կարող են անհարմար լինել, հատկապես այն մարդկանց համար, ովքեր չեն կարողանում օգտվել ինքնաթիռի անմատչելի գուգարաններից: Ավելի կարճ տարանցիկ և տրանսֆերային չվերթները կարող են ավելի լավ տարբերակ լինել:

Առնվազն 90 րոպե հատկացրեք Ձեր տրանսֆերային թռիչքների համար (կամ ավելի շատ, եթե պահանջվում է անցնել ներգաղթային և մաքսային անցակետերով տրանսֆերային թռիչքների միջանկյալ ժամանակահատվածում), որպեսզի ունենաք բավականաչափ ժամանակ Ձեր թռիչքային դարպասին հասնելու համար:

Փորձեք ուսումնասիրել Ձեր երթուղիների բոլոր օդանավակայանների դասավորությունն ու մատչելիությունը, նույնիսկ եթե դուք միայն կարճ ժամանակ ունեք Ձեր միջանկյալ թռիչքների ընթացքում: Եթե մատչելիությունը բացակայում է, նաև հաշվի առեք հնարավոր հատակագծային պլանները, որոնք նախատեսված են անկանխատեսելի դեպքերի համար: Ձեր գիշերանոթը կամ մեզընդունիչը, որոնք դրված են Ձեր ձեռքի ուղեբեռում, պարզապես կարող են փրկել իրավիճակը, եթե դուք անվասայակ օգտագործող եք:

Օգնություն խնդրեք և կոնկրետ ներկայացրեք, թե ինչպես պետք է ձեզ բարձրացնել, եթե օգնություն է անհրաժեշտ ձեզ տեղափոխելիս, անցակետերով անցնելիս, դարպասներին հասնելիս, բայց մաքսակետով անցնելիս միշտ հետևեք Ձեր ուղեբեռին:

Խնդրեք, որ առանց տոմսի որևէ անձ ձեզ օգնի անվտանգության ստուգում անցնել և, անհրաժեշտության դեպքում, ուղեկցի դեպի ձեր թռիչքի դարպասը: Օգնող անձը պետք է մոտենա ավիաընկերության գրանցման պատուհանին և ստանա «անցաթուղթ», որը նրանց թույլ կտա առանց տոմսի անցնել մաքսային անցակետով:

Նախադրեք հատուկ սննդակարգի ձեր պահանջները կամ օգնության կարիքը (ավիաընկերության աշխատակիցներին չի թույլատրվում օգնել ուտելու ընթացքում, բայց նրանք պետք է օգնեն փաթեթների բացման և ուտելիքի ընտրության հարցում)։

Նախապես պատվիրեք կոնկրետ նստատեղ, ինչպես օրինակ, կողային նստատեղ, որը գտնվում է յուրաքանչյուր հատվածի առաջին շարքում՝ անհրաժեշտության դեպքում սայլակը տեղափոխելու համար։ Ուշադիր եղեք, քանի որ ոչ բոլոր նստատեղերն ունեն շարժական ձեռնատակեր։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՌԻՂԵՎՈՐՆԵՐԻՆ

Ավիաընկերությունները խրախուսում են հաշմանդամություն ունեցող ուղևորներին թոփաքից առնվազն 48 ժամ առաջ իրենց հարմար ցանկացած տարբերակով ուղարկել հարցում՝ նախապես ամրագրելով տեղը։ Ամրագրումը կարող են իրականացնել վաճառքի գրասենյակներում, ավիաընկերության գործակալների օգնությամբ, ավիաընկերության կայքում, կամ պարզապես զանգահարել ավիաընկերության համապատասխան հեռախոսահամարով։

Անհրաժեշտ է տեղեկանալ հաշմանդամություն ունեցող ուղևորների սպասարկման համար հատուկ անհրաժեշտ պայմաններին, ինչպես նաև չափսերի, քաշի և շարժողական համակարգին վերաբերող այլ բնութագրիչ տվյալների մասին, որոնք անհրաժեշտ են ապահովել տեղափոխության ընթացքում։

Հաշմանդամության որոշ տեսակ ունեցող ուղևորների խորհուրդ է տրվում ավիատոմս ձեռք բերելուց առաջ խորհրդակցել բժշկի հետ՝

- Կրթվյալստրվի՞ արդյոք թոփաք բժշկական տեսանկյունից,
- Ինչպիսի՞ նախազգուշական միջոցներ պետք է ձեռնարկվեն,
- Արդյո՞ք անհրաժեշտ է ուղեկցող թոփաքի ժամանակ։

Առաջարկվում է ծանոթանալ հաշմանդամություն ունեցող ուղևորների տեղափոխման ժամանակ հետևյալ գործող ծառայություններին.

Ուղեկցում և օգնություն օդանավակայանի տարածքում (այդ թվում նաև վայրէջքից հետո տրանսպորտային միջոցի ապահովում և տեղավորում), չվերթի գրանցում և ուղեբեռի ձևակերպում, օգնություն սահմանային, անցակետային գնումների և ստուգման այլ գործընթացների իրականացման ընթացքում, օգնություն օդանավ նստելու և օդանավից իջնելու ժամանակ, վայրէջքից հետո ուղեբեռի ստացում:



Տեղաշարժման համար անհրաժեշտ պարագաների ապահովում (այդ թվում հաշմանդամության աթոռ-սայլակ), որոնք կօգնեն ուղևորի տեղաշարժմանը օդանավակայանի տարածքում:

Օդանավի թռիչքից առաջ և վայրէջքից հետո ինքնուրույն շարժվելու դժվարություն ունեցող ուղևորներին ապահովել անհրաժեշտ սարքավորումներով, այդ թվում հատուկ վերելակի օգտագործում, ուղեկցում և իրերի տեղափոխում: Օդանավի վայրէջքի ընթացքում ցուցաբերել հատուկ ուշադրություն տվյալ ուղևորի նկատմամբ: Օդանավակայանի ծառայողական կազմակերպության աշխատակիցների կողմից ժամանման պահին հատուկ դիմավորման կազմակերպում, ուղեկցման և տեղափոխության օգնություն օդանավակայանի շենքում:

Ժամանակավոր օգտագործման համար հաշմանդամության սայլակի տրամադրում, եթե ինչ-ինչ պատճառներով չի հասցվել հաշմանդամություն ունեցող ուղևորի սեփական օգտագործման աթոռ-սայլակը (աթոռ-սայլակի անսարքություն կամ կորուստ թռիչքի ընթացքում): Հատուկ ուղեկցող շների տրամադրում տեսողության և լսողության խնդիրներ ունեցող ուղևորների համար:



**ՀԱՏՈՒԿ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ՈՒՂԵՎՈՐԻՆ ՎԱՅՐԷԶՔԻ
ԺԱՄԱՆԱԿ. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ
ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**



Սայլակով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող ուղևորը կարող է թոչեւ ինչպես ուղեկցող անձի հետ, այնպես էլ միայնակ: Հաշմանդամության աթոռ-սայլակը որպես ուղեբեռ միշտ տեղափոխվում է անվճար՝ հաստատված անվճար ուղեբեռի տեղափոխման նորմերի համաձայն: Ուղևորները մինչև վայրէջքը կարող են օգտագործել սեփական աթոռ-սայլակը (բացառությամբ էլեկտրական մարտկոցով սայլակի), կամ հանձնել որպես ուղեբեռ անմիջապես գրանցման հարթակից: Վերջին դեպքում ուղևորը հասցվում է ինքնաթիռին օդանավակայանի կողմից տրամադրվող աթոռ-սայլակի օգնությամբ: Սեփական աթոռ-սայլակը ուղևորին վերադարձվում է կամ ինքնաթիռից իջնելու պահին, կամ ուղեբեռը վերադարձնելու գոտում. այդ դեպքում վերադարձման կետ ուղևորին հասցնում են օդանավակայանի կողմից տրամադրվող աթոռ-սայլակի միջոցով:

Աթոռ-սայլակներ և այլ օժանդակ սարքավորումներ տրամադրվում են անվճար՝ հիմք ունենալով օդանավակայանում ուղեբեռների ձևակերպման բաժնում բեռի ձևակերպման փաստաթղթերը:

Ինքնաթիռի ուղևորային սրահում թույլատրվում է ծալվող-փակվող աթոռ-սայլակների և այլ հարմարանքների փոխադրումը, եթե նրա չափերն ու քաշը չեն գերազանցում սահմանված չափորոշիչները:

ՄԱՐՏԿՈՑԱՅԻՆ ԱԹՈՌ-ՄԱՅԼԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ



Թաց-հեղուկային մարտկոցներով աշխատող աթոռ-սայլակները կամ այլ շարժողական օժանդակ սարքավորումները տեղափոխվում են միայն ուղեբեռային բաժնում: Այդպիսի սարքավորումներն անհրաժեշտ է ուղեբեռային բաժին հանձնել թոփքի գրանցման ընթացքում: Այդ դեպքում ուղևորին մինչև ինքնաթիռ հասցնում են օդանավակայանի տրամադրած աթոռ-սայլակի միջոցով: Ելնելով անվտանգության նկատառումներից՝ տեղափոխումից առաջ նշված սարքավորումներում պետք է անջատել մարտկոցները, իսկ մարտկոցների սեղմակները մեկուսացնել կարճ միացումից խուսափելու համար: Մարտկոցների անջատումը և միացումը կատարվում է կամ ուղևորի կողմից, կամ ըստ հարցման՝ սպասարկման կազմակերպության կողմից: Ուղևորները պետք է իրենց մոտ ունենան մարտկոցները միացնելու համար անհրաժեշտ համապատասխան գործիքների հավաքածու, ինչպես նաև նման սարքավորումները ինքնաթիռով անվտանգ տեղափոխելու համար անհրաժեշտ տեխնիկական տեղեկատվություն պարունակող ուղեցույց՝ փաթեթավորման պարագաների հետ միասին:

Հիվանդություն ունեցող ուղևորների տեղափոխման համար անհրաժեշտ է բժշկի տված բժշկական եզրկացությունը, ինչպես նաև հատուկ ձև, որը լրացվում է բժշկի կողմից և պարունակում է հատուկ ցուցումներ նման հիվանդի տեղափոխելիս: Հիվանդ ուղևորների տեղափոխումը կախված է նրա առողջական վիճակի աստիճանից:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԿՈՒՅՐ ԿԱՄ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Օդային ճամփորդություն

Կույր և տեսողության խնդիրներ ունեցող ճանապարհորդները կարող են ճամփորդել ցանկացած վայր, ցանկացած ժամանակում, հասարակական տրանսպորտի ցանկացած միջոցով: Զարգացած երկրներում ոչ մի ընկերություն, որը վճարովի ճանապարհատրանսպորտային ծառայություններ է մատուցում ուղևորներին աշխարհի բազմաթիվ երկրներում, չի կարող սահմանափակել տեսողության խնդիրներ ունեցող անձանց ճանապարհորդելու իրավունքը, կամ չի կարող կանոններ սահմանել, թե որտեղ կարող են այս ուղևորները նստել՝ իրենց փոխադրամիջոցով ճամփորդելիս:

Այնուամենայնիվ, կույր ուղևորները պետք է հաշվի առնեն այլ ուղևորների կարիքները և, հնարավորության դեպքում, նստատեղ վերցնեն ներսի հատվածում կամ պատուհանի մոտ, որպեսզի իրենց ձեռնափայտը, եթե այն ծալովի չէ, հնարավոր լինի հենել խցիկի պատին: Եթե տեսողության խնդիր ունեցող անձին ուղեկցում է ուղեկից շունը, շանը թույլատրվում է պառկել այդ անձի ոտքերի մոտ՝ առանց խոչընդոտելու այլ ուղևորներին դուրս գալ իրենց նստատեղից: Բազմաթիվ ինքնաթիռներում խցիկի միջնապատի հետևամասի կողային նստատեղերը (bulkhead seat) շատ հարմար են տեսողության խնդիրներ ունեցող անձանց, որտեղ կա բավականաչափ տարածք շների պառկելու համար: Մեր օրերում, քանի որ ավիատղիներին անհաժեշտ են անձինք, ովքեր կկարողանան բացել ելքի դուռը արտակարգ իրավիճակների դեպքում, այս ծառայությունը հասանելի կլինի տեսողության



խնդիրներ ունեցող անձանց միայն այն դեպքում, եթե կողային նստատեղը ելքի կողքին չէ:



Աշխարհի բազմաթիվ երկրների ավիաընկերություններ, այդ թվում Ամերիկայում և Կանադայում, իրենց թռիչքների ընթացքում թույլատրում են ուղեկցող շների: Այնուամենայնիվ, եթե դուք ճանապարհորդում եք արտերկրում, որոշ երկրներ ունեն կատաղության դեմ խիստ օրենքներ, որոնք

սահմանափակում են բոլոր կենդանիների մուտքը օդանավ: Ավիաընկերությունից դուք պետք է ճշտեք, թե արդյոք այն երկիրը, ուր մտադիր եք այցելել, ունի կենդանիներին օդանավ արգելող օրենքներ և կանոնակարգեր: Խիստ կանոնակարգերով երկրների թվին են պատկանում Հավայան կղզիները, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Հոնկոնգը, Իռլանդիան և Միացյալ Թագավորությունը: Մի շարք այլ երկրներ պահանջում են վկայական, որը կհաստատի, որ ճանապարհորդող կենդանին վերջին ժամանակաշրջանում ստացել է կատաղության դեմ պատվաստում:

Ուղեկից շների կաշեպատ ձգաթուկերը, կրծկապերն ու վզկապերը սովորաբար պատրաստվում են չժանգոտվող պողպատից, և դա ակտիվացնում է մետաղական դետեկտորը, երբ շունը անվտանգության ստուգում է անցնում օդանավակայաններում: Այս ձայնային ազդանշանը կարող է ազդել շան վրա և շեղել նրա կենտրոնացումն ու աշխատանքը: Շանն ու տիրոջը ԵՐԲԵՔ չի կարելի բաժանել միմյանցից: Անվտանգության ստուգման ընթացքում չի կարելի շան ձգաթուկն ու կրծկապը հանել կենդանու վրայից: Ավելի հարմար կլինի շրջանցել անվտանգության խցիկը



«թունելը» և խնդրել իրականացնել զննում շարժական դետեկտորով: Այն շատ հարմար է կիրառել ինչպես կենդանիների, այնպես էլ նրանց տիրոջ զննման ընթացքում: Անվտանգության աշխատակցին թույլատրվում է կենդանուն ցած իջեցնել, մինչ նրա տերը ամբողջովին անվտանգության ստուգում է անցնում: Անվտանգության աշխատակիցը պետք է նաև հարգի այն փաստը, որ տեսողության խնդիր ունեցող ճանապարհորդը չի տեսնում զննման սարքի ազդանշանները, ուստի նա պետք է բացատրի իր գործողությունները տեսողության խնդիրներ ունեցող անձին բանավոր կերպով:

Եթե հեռախոսով կամ առցանց եք պատվիրում Ձեր թոփչքը, միշտ տեղեկացրեք Ձեր ճամփորդական գործակալին, որ դուք կույր եք կամ ունեք տեսողության խնդիր և ճանապարհորդելու եք Ձեր ուղեկից շան հետ, որպեսզի օդանավակայանի անձնակազմն ու թոփչքը սպասարկող անձինք իրազեկ լինեն ձեր խնդրի մասին և ձեզ տրամադրեն անհրաժեշտ համապատասխան ծառայություններ:

Խնդրեք, որ Ձեզ նախապես նստեցնեն օդանավ՝ կուտակումներ ենթադրող հերթերից խուսափելու համար, ինչպես նաև համոզվեք, որ կստանաք հատուկ տեղեկատվություն թոփչքի ընթացքում տրամադրվող ծառայությունների և արտակարգ իրավիճակների դեպքում օգտագործվող օդանավի ելքերի վերաբերյալ:



ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ



Տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար, ովքեր ցանկանում են շրջագայել, կան բազմաթիվ հնարավորություններ: Հաշմանդամություն ունեցող անձանց մասին շատ ազգային, միջազգային օրենքներ ու համաձայնագրեր պարտավորեցնում են տուրիստական ընկերություններին և ավիաընկերություններին կազմակերպել մատչելի և հարմար ճամփորդություն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Սա վերաբերում է նաև տեսողության խնդիրներ ունեցող անձանց, որոնք կարող են տեղաշարժվել առանց օգնականի ուղեկցության: Այնուամենայնիվ, այն մարդիկ, ովքեր նախընտրում են միանալ շրջագայությանը, որտեղ նրանք ավելի ապահով են զգում, կան տուրօպերատորներ, որոնք կազմակերպում են շրջագայություններ այն զբոսաշրջիկների համար, որոնք հայտնի են որպես «դանդաղ քայլող», այսինքն ունեն ֆիզիկական շարժունակության խնդիրներ: Քանի որ նման տուրերն ավելի երկար են տևում, քան մյուս շրջագայությունները, նրանք տեսողության խնդիր ունեցող անձին հնարավորություն են տալիս ավելի հանգիստ վայելել իր շրջագայությունները:

ՏՐԱՆՄՊՈՐՏ

Օդային:

Եթե ցանկանում եք ինքնաթիռով ճանապարհորդել, ապա պետք է տեղեկացնեք ձեր ճանապարհորդական գործակալին ձեր հաշմանդամության մասին թռիչքի ամրագրման ժամանակ և հետևեք, որ տեղեկատվությունը ներառված լինի ձեր չվերթի ամրագրման մեջ: Սա երաշխիք կհանդիսանա, որ ավիաընկերությունը կարողանա ձեզ անհրաժեշտ ծառայություններ մատուցել, այնպիսի ծառայություններ, որոնց կարիքը դուք կունենաք թռիչքից և ինքնաթիռ նստելուց առաջ, ապա ձեզ ապահով կուղեկցեն օդանավի մեջ և կառաջարկեն ճաշացանկի ընտրություն: Ճանապարհորդելու ձեր իրավունքը պաշտպանված է տեղական և միջազգային օրենքներով, պայմանագրերով ու բազմաթիվ կանոնակարգերով: Եթե դուք ունեք որևէ խնդիր, փորձեք խոսել ավիաընկերության բողոքարկման հարցերով պատասխանատուի հետ, ով պետք է հասանելի լինի ամեն պահի:

Երկաթուղի:

Միացյալ Նահանգներում և Կանադայում դուք կարող եք աջակցություն խնդրել երկաթուղային ընկերությունից, որոնք ձեզ օգնություն կտրամադրեն գնացք նստելիս և ձեր նստատեղը գտնելիս: Բավականաչափ ժամանակ տրամադրեք, որպեսզի համոզվեք, որ որևէ մեկը հասանելի կլինի՝ ձեզ օգնելու համար: Նույնը սովորաբար կիրառվում է Եվրոպայում և այլ երկրներում, որտեղ գործում են ժամանակակից երկաթուղային համակարգեր:

Ավտոբուս:

Հյուսիսային Ամերիկայում Գրեյհաունդ Բաս-ը (Greyhound Bus) միակ ընկերությունն է, որն իրականացնում է միջքաղաքային ավտոբուսային ծառայություն ամբողջ երկրում, և նրանք տրամադրում են ամեն տեսակի աջակցություն տեսողության խնդիրներ ունեցող անձանց, մասնավորապես ավտոբուս նստելիս և իջնելիս, հայտարարում են ուղևորի նպատակակետն ու ցուցաբերում են ցանկացած այլ օգնություն, որի կարիքը կզգա ուղևորը: Քանի, որ ԱՄՆ-ի միջքաղաքային ավտոբուսային

ընկերությունները պարտավոր են հետևել հաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենքների պահանջներին, անհրաժեշտության դեպքում նրանք ևս օգնություն կտրամադրեն տեսողության խնդիրներ ունեցող անձանց:

Հյուրանոցներ

Շատ հյուրանոցներ այսօր կարող են ապահովել հատուկ ահագանգային և անվտանգության ծառայություններ, և շատերն ունեն ատլիո և տեքստային նկարագրություն ունեցող հեռուստատեսային ծառայություններ: Հյուրանոց ամրագրելիս պետք է նախապես խնդրեք, որ նման ծառայություններ մատուցվեն:

ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ինչպե՞ս կարելի է հասնել մատչելիության.

- **Հաղթահարելով** հաշմանդամություն ունեցող ուղևորներին հանդիպող ֆիզիկական խոչընդոտները՝ դասավորության և տեխնոլոգիաների պարզ փոփոխությունների կիրառմամբ:
- **Ազատելով** լսողության խնդիրներ ունեցող ուղևորներին բազմաթիվ դժվարություններից՝ նրանց տրամադրելով նույն տեղեկատվությունը, որը հասանելի է բոլոր մյուս ուղևորներին:
- **Վերապատրաստելով** հաշմանդամություն ունեցող անձանց հետ ամենօրյա կապի մեջ մտնող բոլոր օդային տրանսպորտային ընկերությունների անձնակազմներին, որպեսզի կարողանան հասկանալ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները և, նրանց տեղեկացնելով, թե ինչպե՞ս է հնարավոր արագ, ապահով և արժանապատվորեն սպասարկել հաշմանդամություն ունեցող անձանց:

ՆԱԽԱ-ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Օդային փոխադրամիջոցների մատչելիության կանոնակարգեր և ընթացակարգեր

Օդային փոխադրամիջոցների մատչելիության մասին կանոնակարգերը վերացնում են մի շարք սահմանափակումներ, որոնք նախկինում խտրական էին հաշմանդամություն ունեցող ուղևորների նկատմամբ:

- Ըստ նոր կանոնակարգերի, ավիափոխադրողները չեն կարող հրաժարվել ուղևորին տեղափոխելուց՝ պայմանավորված միայն նրա հաշմանդամության հիմքով:
- Օդային ավիափոխադրողները չեն կարող սահմանափակել հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը մեկ թռիչքի ընթացքում:
- Ճանապարհորդության մասին ամբողջ տեղեկատվությունը, որը տրամադրվում է բոլոր ուղևորներին, պետք է մատչելի լինի նաև հաշմանդամություն ունեցող ուղևորների համար:
- Ավիափոխադրողները պետք է արգելք չհանդիսանան և տեղափոխեն հաշմանդամություն ունեցող անձին, ով ունի այնպիսի խնդիր, որը կարող է ազդել իր արտաքին տեսքի կամ ինքնաբուխ վարքագծի վրա, կամ, նույնիսկ, եթե այդ հաշմանդամությունը կարող է վիրավորել, գայրացնել կամ անհանգստության պատճառ հանդիսանալ անձնակազմի անդամների կամ այլ ուղևորների համար:

Ե՞րբ է պահանջվում նախնական ծանուցում

Ավիաընկերությունը հաշմանդամություն ունեցող ուղևորներից չի կարող պահանջել նախօրոք տեղեկացնել իրենց ճանապարհորդելու մտադրությունների կամ հաշմանդամության մասին, բացառությամբ այն դեպքերի, որոնք տրամադրված են ստորև: Այնուամենայնիվ, ավիաընկերությանը նախօրոք տեղեկացնելով Ձեր կարիքների մասին և, թե ինչպես կարող են Ձեզ օգնել, ընդհանուր առմամբ կհանգեցնի ավելի հաճելի և հանգիստ ճանապարհորդության: Ավիափոխադրող ընկերությունները կարող են պահանջել մինչև 48 ժամ կանխավ ծանուցում և մեկ ժամ առաջ

նախապես գրանցում հաշմանդամություն ունեցող անձից, ով կցանկանա ստանալ հետևյալ ծառայությունները:

- Էլեկտրական սայլակի տեղափոխում 60 տեղանոցից ավելի քիչ ինքնաթիռում,
- Ավիաընկերության կողմից վտանգավոր նյութերի փաթեթավորման ծառայության տրամադրում՝ անվասայլակի մարտկոցի կամ այլ օժանդակ սարքերի համար,
- Որպես խումբ ճանապարհորդող 10 կամ ավելի հաշմանդամություն ունեցող ուղևորներին ծառայությունների տրամադրում:
- Մատչելի սանհանգույց չունեցող ինքնաթիռի մեջ անվասայլակի կամ հատուկ աթոռակի տրամադրում այն անձանց, ովքեր կարող են ինքնուրույն օգտվել անմատչելի սանհանգույցից՝ համապատասխան հարմար աթոռի կամ սայլակի առկայության դեպքում:

Չեն տրամադրվում հետևյալ ծառայությունները կամ

սարքավորումները

- Բժշկական թթվածին՝ օդանավում օգտագործելու համար
- Ինկուբատորի տեղափոխում
- Օդանավի էլեկտրամատակարարման համակարգից արհեստական շնչառության սարքի միացում
- Պատգարակով տեղափոխվող ուղևորի համար հարմարեցումներ:

Համապատասխան ծառայություններ տրամադրելու համար ավիաընկերությունները կարող են պահանջել հաշմանդամություն ունեցող անձից 48 ժամ կանխավ ծանուցում և օդանավակայանում առնվազն մեկ ժամ առաջ գրանցում:

Ավիաընկերությունները կարող են հաշմանդամություն ունեցող անձանցից պահանջել կատարել խելամիտ, ոչ խտրական վճարումներ այդ ընտրովի ծառայությունների համար:

ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ



Ուղևորի սպասարկում

Օդանավակայան այցելող ցանկացած անձ ակնկալում է լավագույն սպասարկում: Տեղեկատվական ծառայության աշխատակիցները պատրաստ են շուրջօրյա աջակցություն ցուցաբերել հարցեր կամ խնդիրներ ունեցող ուղևորներին:

Տեղեկատվական կենտրոնները գտնվում են և՛ ժամանման, և՛ մեկնման սրահներում:

Ուղևորների Սպասարկման Ծառայության աշխատակիցները կարգավորում են սահմանային հսկողության անցակետի հատվածում ուղևորների կանոնավոր հոսքը դեպի անձնագրային զննման խցիկներ՝ առանձնացնելով հատուկ խմբին պատկանող ուղևորներին, ինչպիսիք են՝ ֆիզիկական խնդիրներ ունեցող անձինք, հղի կանայք, մեծահասակները և չորս տարեկանից ցածր երեխաներ ունեցող ընտանիքները:

Օդանավակայանի մատչելիություն

Աշխարհի կառուցվող կամ վերանորոգվող օդանավակայանները պետք է համապատասխանեցվեն Հաշմանդամություն ունեցող անձանց մասին գործող օրենքների, վավերացրած կոնվենցիաների մատչելիությունն ապահովող կանոնակարգերին: Ներկայումս բազմաթիվ փոփոխություններ են իրականացվում այս բնագավառում. բարելավվում են օդանավակայանների և նրանց ծառայությունների մեծ մասի մատչելիությունը:

Որոշ բացառություններով, առաջիկա մի քանի տարիների ընթացքում բոլոր ավիափոխադրող ընկերությունները պարտավոր են մատչելի դարձնել հետևյալ ծառայությունները՝

- Ուղևորային համալիրում/տերմինալի մոտ մատչելի ավտոկայանատեղիներ
- Մատչելի ավտոկայանատեղիները մատնանշող նշաններ և այդ տարածքներից դեպի ուղևորային համալիր/տերմինալ տանող մատչելի ուղիներ
- Մատչելի բուժօգնության հարմարություններ և ուղևորների աջակցության բուժկետեր
- Մատչելի գուգարաններ
- Մատչելի խմելու ջրի շատրվաններ
- Տոմսերի հավաքագրման մատչելի համակարգեր



- Ուժեղացված հեռախոսներ՝ լսողության խնդիրներ, և տեքստային հեռախոսներ՝ խոսքի դժվարություններ ունեցող անձանց համար: Յուրաքանչյուր ուղևորային համալիրում՝ աչքի զարնող վայրում, պետք է լինեն ամենաքիչը մեկական այդպիսի հեռախոսներ:
- Բեռների հանձնումն ու ստացումը պետք է կազմակերպել այնպես, որ մատչելի լինի հաշմանդամություն ունեցող անձանց: Անհրաժեշտության դեպքում պետք է ունենալ սուրդորթարգմանիչներ: Ստանդարտ չափի՝ հավաքվող մեկ սայլակը պետք է տեղափոխվի անվճար և չհաշվառվի որպես առանձին բեռ:
- Անհրաժեշտության դեպքում պետք է անձին ուղեկցող տրամադրել, ով նրա հետ կլինի մինչև ինքնաթիռ բարձրանալը և իջնելուց հետո: Քանի որ սայլակը պետք է հանձնել ուղեբեռան հետ, պետք է հաշմանդամություն ունեցող անձին մեկ այլ սայլակ տրամադրել, սակայն այս ծառայության մասին նախօրոք պետք է տեղեկանալ օդանավակայանից և ավիաընկերությունից:
- Դեպի ուղևորային համալիրներ, բուժկետեր, գուգարաններ և հատուկ ծառայությունների կետեր ուղղորդող բավականաչափ

մեծ և վառ գույնով նշաններ: Ցանկալի է օգտագործել պատկերանշաններ՝ ընթերցանության դժվարություններ ունեցող անձանց համար: Իսկ թույլ տեսնող անձանց հեշտ կողմնորոշման համար վառ գույնով պետք է ընդգծել դեպի նշված վայրեր տանող ճանապարհները:

- Ինքնաթիռ բարձրանալիս կամ իջնելիս միջանցքները ևս պետք է հարթ լինեն, իսկ ինքնաթիռում՝ մեկ սայլակի լայնության չափ: Եթե միջանցքը բավական լայն չէ, ապա պետք է տրամադրել հատուկ սայլակ միայն օդանավի միջանցքներում մարդկանց տեղափոխելու համար:
- Տեղեկատվական համակարգեր, օգտագործելով տեսողական բառեր, տառեր կամ խորհրդանիշներ լուսավորությամբ և գունավոր կոդերով, և բանավոր տեղեկատվություն տրամադրելու համակարգեր:

Տեղափոխում օդանավակայանի տարածքում

Հաշմանդամություն ունեցող անձանց ճամփորդությունը ավելի դյուրին դարձնելու համար մեծ օդանավակայաններից պահանջվում է առաջիկա մի քանի տարիների ընթացքում մատչելի դարձնել հետևյալ ծառայությունները՝

- Օդանավակայաններին պատկանող կամ նրանց կողմից շահագործվող ավտոկայանատեղեր, ավտոկայանատեղերի և ուղևորային համալիր/տերմինալ շենքերի միջև անձանց տեղափոխումը:
- Ուղևորային համալիրների/տերմինալների և չվերթների դարպասների միջև քայլուղիներ:

Բոլոր ուղևորափոխադրում իրականացնող ծառայությունները ներկայումս պետք է ներառեն առնվազն մեկ մատչելի ուղի/ճանապարհ, որը կկապի օդանավակայանի մուտքը տոմսարկղներին, չվերթների հաշվառման և ուղեբեռի հանձման կետերին: Այս ուղիները պետք է նվազագույնի հասցնեն ցանկացած լրացուցիչ հեռավորություն, որով սայլակ օգտագործողները պետք է անցնեն՝ հասնելու այդ կառույցներին, ի տարբերություն մյուս ուղևորների:



Ուղեբեռի հանձնման և ստացման կետերը պետք է լինեն մատչելի և հասանելի հաշմանդամություն ունեցող անձանց համար, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն օգտվել այդ ծառայություններից: Մատչելի ծառայությունների գտնվելու վայրը պետք է նշվեն համապատասխան նշանների միջոցով:

Ուղևորափոխադրում իրականացնող ընկերությունները չպետք է սահմանափակեն հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժը տերմինալներում, կամ չպետք է նրանց պարտադրեն մնալ ուղևորների սպասասրահում կամ այլ վայրում՝ սպասելով օդանավին կամ այլ օժանդակության:

Տեղեկատվություն ուղևորների համար

Ուղևորափոխադրում իրականացնող ընկերությունները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց, ներառյալ տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց, տեղեկատվության մատչելիություն և հասանելիություն միաժամանակ այլ ուղևորների հետ, ներառյալ ստորև նշված տեղեկատվությունը՝

- Տոմսարկղներ
- պլանային ժամանման և մեկնման ժամանակացույց ու չվերթի դարպասներ
- դարպասների փոփոխություններ
- չվերթի հետաձգում և ուշացում
- ժամանակացույցի փոփոխություն
- ուղևորների հաշվառում և ուղեբեռի ձևակերպում
- ուղեբեռի ստուգում և հանձնում

Այս տեղեկատվությունը պետք է մատչելի լինի հաշմանդամություն ունեցող ուղևորի խնդրանքով: Օդանավակայանի և օդանավի անձնակազմը հնարավոր է չդադարեցնեն անմիջական անվտանգության իրենց պարտականությունները՝ նման տեղեկատվություն տրամադրելու համար:

Անվտանգության տեսածրում (սկանավորում)

Հաշմանդամություն ունեցող անձը պետք է անցնի նույն անվտանգության զննումը, ինչպիսին ցանկացած ճանապարհորդող անձ:

Եթե հաշմանդամություն ունեցող անձը կարողանա անցնել անվտանգության համակարգի միջոցով, առանց այն ակտիվացնելու, ապա անձը չի ենթարկվի հատուկ զննումային ընթացակարգերի: Անվտանգության աշխատակիցները կարող են անվճար զննել հաշմանդամություն ունեցող անձի աջակցող սարքը, որը, նրանց կարծիքով, կարող է թաքցնել զենք կամ այլ արգելված նյութ:

Եթե հաշմանդամություն ունեցող անձը չի կարողանում անցնել անվտանգության համակարգի միջով առանց այն ակտիվացնելու, ապա անձը ենթակա է հետագա զննման այն նույն ձևով, ինչպես որևէ այլ ուղևոր:

Որոշ օդանավակայաններում անվտանգության ստուգման անձնակազմը կարող է օգտագործել ձեռքի սարք (շարժական դետեկտոր), որը թույլ կտա նրանց ավարտել սկանավորումը՝ առանց ֆիզիկապես զննելու անհատին: Եթե սկանավորման այս մեթոդը եւ արդյունավետ չլինի և ֆիզիկական զննումը դառնա անհրաժեշտություն, ապա ուղևորի խնդրանքով, զննումը պետք է իրականացվի առանձին:

Անվտանգության ստուգումը սայլակով տեղաշարժվող անձանց համար կարող է փոքր-ինչ ավելի ժամանակ խլել. այս դեպքում հարկ կլինի ստուգումն անցկացնել շարժական դետեկտորով: Իսկ եթե կարող եք առանց սայլակի անցնել անցակետով, ապա խնդիր չի առաջանա:

Եթե ուղևորը պահանջում է հատուկ զննում, ապա փոխադրող ընկերությունը պետք է ժամանակին տրամադրի այդ ծառայությունը, որպեսզի ուղևորը հասցնի նստել օդանավ: Նման մասնավոր զննումները պարտադիր չեն բոլոր ուղևորների համար, և դրանք կարող են պահանջել ավելի շատ ժամանակ:

Ինքնաթիռում տեղի տրամադրում

Հաշմանդամություն ունեցող անձին չի կարելի պարտադրել նստել որոշակի տեղում կամ մերժել որևէ տեղ ինքնաթիռում, բացառությամբ անվտանգության կանոններով սահմանված դեպքերի: Անվտանգության նկատառումներից ելնելով, անվտանգության այդ կանոնները սահմանափակվում են ելքի մոտ գտնվող շարքերի նստատեղերը: Փոխադրողը չի կարող մերժել հաշմանդամություն ունեցող անձի տեղափոխությունը, բայց կարող է մերժել կոնկրետ տեղեր այն ճանապարհորդներին, ովքեր 15 տարեկանից փոքր են, չեն կարող գործել կամ տեղաշարժվել առանց չափահասի ուղեկցության, կամ ովքեր ունեն շարժունակության, արագաշարժության, տեսողության, լսողության, խոսքի, ընթերցանության կամ ընկալելու դժվարություններ և չեն կարող իրականացնել արտակարգ իրավիճակների տարհանման գործառնություններ: Ուղևորափոխադրում իրականացնող ընկերությունը կարող է նաև մերժել կոնկրետ նստատեղեր այն ուղևորներին, ովքեր ունեն տարբեր հիվանդություններ և բժշկական խնամքի կարիք ունեն, հղի կանանց, փոքր երեխաների հետ ճանապարհորդողներին, ինչը կարող է խանգարել արտակարգ իրավիճակների տարհանման գործընթացը կամ վնաս հասցնել հենց իրենց՝ ուղևորներին:

Հաշմանդամություն ունեցող ճանապարհորդին նաև կարող են մերժվել որոշ տեղեր, եթե՝

- Ուղևորի բնագդային անկառավարելի վարքագիծն այնպիսին է, որ կարող է խանգարել թռիչքի անվտանգությունը, և, անվտանգության նկատառումներից ելնելով, ավելի լավ է ուղևորին մերժել որոշակի նստատեղ, քան հրաժարվել նրան ծառայություն մատուցելուց:
- Նստատեղը չի կարող տեղավորել շներին կամ աջակցող կենդանիներին:

Յուրաքանչյուր դեպքում ուղևորափոխադրում իրականացնող ընկերությունները պարտավոր են առաջարկել այլընտրանքային նստատեղեր:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԽԹԱՆՈՒՄ ԵՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿՐԹԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

1. *Ամերիկյան խորհուրդներ*
(*American Councils for International Education*)



Կայք՝ <http://americancouncils.am/am/american-councils-armenia/>

Ամերիկյան խորհուրդները, լինելով միջազգային կրթության, ակադեմիական փոխանակման, օտար լեզվի իմացության, գնահատման և հետազոտության ուսումնասիրման բնագավառներում առաջատար, հնարավորություններ է ստեղծում անհատների և հաստատությունների համար՝ հաջողության հասնելու սերտորեն փոխկապակցված և արագ փոփոխվող աշխարհում:

Իր գործունեության չորս տասնամյակների ընթացքում Ամերիկյան խորհուրդները դարձել է կրթական և միջազգային վերապատրաստման ամերիկյան առաջատար կազմակերպություններից մեկը՝ իրականացնելով փոխանակման և վերապատրաստման ավելի քան երեսուն, այդ թվում ԱՄՆ-ի պետական և այլ երկրների կրթաթոշակային ծրագրեր: Կազմակերպությունը իրագործում է համագործակցային և միասնական ծրագրեր ԱՄՆ-ի, Եվրասիայի, Արևելյան Եվրոպայի անհատների և հաստատությունների միջև, խորհրդատվություն է տրամադրում նախագծերի մշակման և կրթական նորարարական ծրագրերի վերաբերյալ և ակտիվորեն խթանում է Եվրասիայի երկրների լեզուների և երկրագիտության ուսումնասիրմանն ԱՄՆ-ում:

Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդներ ACTR/ACCELS հայաստանյան գրասենյակը հիմնադրվել է 1996 թ-ին: Այս կարճ ժամանակահատվածում Ամերիկյան խորհուրդները

Հայաստանում իրականացրել է ԱՄՆ-ի կառավարության կողմից հովանավորվող տասնյակ ծրագրեր՝ հնարավորություն տալով ավելի քան 1200 աշակերտների, ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների սովորելու և մասնագիտական վերապատրաստում անցնելու ԱՄՆ-ի դպրոցներում և համալսարաններում:



Ապագա առաջնորդների փոխանակման (FLEX) ծրագիրը հիմնադրվել է 1992 թվականին, որի ֆինանսավորումը տրամադրում է ԱՄՆ-ի Պետքարտուղարության կրթական և մշակութային գործերի բաժինը: ԱՄՆ կառավարության կողմից

ֆինանսավորվող FLEX ծրագրին կարող են մասնակցել այն բոլոր դպրոցականները, ովքեր համապատասխանում են ծրագրի պահանջներին: Ամերիկյան խորհուրդները կազմակերպում և իրագործում է FLEX ծրագիրը:

Հաշմանդամություն ունեցող երեխաները ևս կարող են մասնակցել ծրագրին: Ծրագրի մեկնարկից՝ 1993թ. ի վեր, ավելի քան 270 դպրոցական Եվրասիայից, ովքեր ունեցել են խնդիրներ տեսողության, լսողության, շարժունակության հետ, դարձել են FLEX ծրագրի հաղթող:

FLEX ծրագրի բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն ծանոթանալ ԱՄՆ մշակույթի հետ, զարգացնել հմտությունները, սովորել օտար լեզուներ, և հաջողության հասնել իրենց կարիերայում: Արտերկրում սովորելը կարող է դառնալ աննախադեպ հնարավորություն՝ տարատեսակ մարտահրավերներ և հաղթահարելու գործում:

FLEX-ը խտրականություն չի դնում ֆիզիկական խնդիրների կամ հաշմանդամության վրա: Եթե դիմորդը համապատասխանում է ներքոնշյալ պահանջներին, ապա կարող է դիմել ծրագրին: Ֆիզիկական խնդիրներ ունեցող դպրոցականների համար ստեղծվում են բոլոր պայմանները՝ քնությունները հանձնելու համար: Խնդրում ենք դիմել Ամերիկյան խորհուրդների երևանյան

գրասենյակ՝ որպեսզի մենք կարողանանք ստեղծել անհրաժեշտ հարմարությունները:

FLEX ծրագրի հաղթող հաշմանդամություն ունեցող երեխաները, մինչ ծրագրի սկսելը՝ օգոստոսին, հաճախում են մեկշաբաթյա աշխատաժողով Օրեգոն նահանգի Յուջին քաղաքում: Այդ աշխատաժողովը նպատակաուղղված է զարգացնելու հաշմանդամություն ունեցող երեխաների ինքնուրույն ապրելակերպի հմտությունները՝ մինչ ԱՄՆ մեկնելը: Աշխատաժողովը կազմակերպվում է Մոբիլիթի Ինթերնեյշնլ ԱՄՆ (MIUSA) կազմակերպության կողմից: MIUSA-ի աշխատաժողովում ներառված են հետևյալ հարցերը.

- Ինտերակտիվ դասընթացներ, որոնք պատմում են ԱՄՆ-ում հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի մասին, ինչպես նաև իրենց իրավունքների մասին՝ կրթական հնարավորությունների և համայնքային գործունեության մեջ:
- Առաջնորդության, թիմային աշխատանքների, խնդիրներ լուծելու հմտությունների զարգացում:
- Գործողությունների ծրագրի նախապատրաստում՝ FLEX ուսումնական տարվա ընթացքում որոշակի նպատակներին հասնելու համար:

2. Մոբիլիթի Ինթերնեյշնլ ԱՄՆ /Mobility International USA (MIUSA)



Կայք՝ www.miusa.org

MIUSA-ն հաշմանդամահեն կազմակերպություն է (DPO), որը հիմնադրվել է 1981 թվականին ԱՄՆ-ում:

Կազմակերպության առաքելությունն է համաշխարհային

մասշտաբով խթանել առաջնորդությունն ու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները: Իրականացնելով նորարարական ծրագրեր՝ MIUSA-ն կառուցում է կամուրջներ, որպեսզի ստեղծի նոր դարաշրջան, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք համաշխարհային հանրության մեջ կունենան իրենց օրինական տեղը:

Մոբիլիթի Ինթերնեյշնլ ԱՄՆ (MIUSA) կազմակերպությունը խթանում է հաշմանդամություն ունեցող անձանց փոխանակման հնարավորությունները ԱՄՆ-ում և տարբեր երկրներում: Կազմակերպությունը գտնում է, որ հաշմանդամությունը երբեք չպետք է խոչընդոտ հանդիսանա տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար՝ օգտվելու կրթական, սպորտային, զբոսաշրջային, աշխատանքային և պրակտիկայի հնարավորություններից:

ԱՄՆ-ը հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխարհի ամենամատչելի երկրներից մեկն է: Ուստի MIUSA-ն պատրաստ է օգնել հաշմանդամություն ունեցող անձանց ամեն տեսակի խորհուրդներով և ռազմավարություններով, որոնք կօգնեն ճանապարհորդություն սկսելուց առաջ և ողջ ընթացքում:

Մոբիլիթի Ինթերնեյշնլ ԱՄՆ (MIUSA) կազմակերպությունը հաշմանդամության հետ կապված ցանկացած հարցերի լավագույն ռեսուրս կենտրոններից մեկն է, որը տրամադրում է տեղեկատվություն միջազգային կրթության, վճարովի և կամավոր աշխատանքի վերաբերյալ: Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել <http://www.miusa.org/plan/coming-to-usa> կայքէջ:

3. Անցում դեպի արտերկիր (Transition Abroad)



Կայք՝ www.transitionsabroad.com/

Transition abroad կայքէջը հանդիսանում է արտերկրում կամավորության, աշխատանքի, բնակության և ուսուցման սմարթ ճանապարհորդական ուղեցույց:

Այս կայքում ներառված են հրաշալի ռեսուրսներ և տեղեկատվություն միջազգային կրթության, դասավանդման, աշխատանքի, ճանապարհորդության, բնակության, կեցության, կամավորության և պրակտիկայի վերաբերյալ:

4. Արտերկիր հաշմանդամություն ունեցող անձանց հետ միասին (Abroad with Disabilities-AWD)



ABROAD WITH DISABILITIES

Կայք՝ <http://abroadwithdisabilities.org/>

«Արտերկիր հաշմանդամություն ունեցող անձանց հետ միասին» (AWD) կազմակերպությունը շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը 2015 թվականին հիմնադրվել է ԱՄՆ Միչիգան նահանգի Քուփերսվիլ քաղաքում՝ խթանելու այն գաղափարը, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են և պետք է մեկնեն արտասահման: AWD-ը խրախուսում է հաշմանդամություն ունեցող անձանց ճանապարհորդությունը և ջանասիրաբար աշխատում է ընձեռել միջազգային կրթական, աշխատանքային, կամավորական և/կամ պրակտիկայի հնարավորություններ հաշմանդամություն ունեցող անձանց արտերկրում: Կազմակերպությունը իր առաքելությունն ու նպատակները իրականացնում է՝

- Ստեղծելով երկխոսություն, տրամադրելով ռեսուրսներ և բարձրացնելով իրազեկությունը հաշմանդամություն ունեցող անձանց ճանապարհորդության վերաբերյալ
- Նախագծելով, մշակելով և իրականացնելով հատուկ վերապատրաստման դասընթացներ աշակերտների և մասնագետների համար՝ իրենց դպրոցներում և կազմակերպություններում մատչելիությունն ու ներառականությունը խթանելու նպատակով
- Տրամադրելով տեղեկատվություն աշխարհի տարբեր երկրներում մատչելիության վերաբերյալ

Այս կազմակերպությունը նաև ծառայում է որպես ներառական և մատչելի կրթական դիզայնի հարթակ՝ տրամադրելով համընդհանուր դիզայնի և աջակցող տեխնոլոգիաների մասին սերտիֆիկացման դասընթացներ: Կազմակերպությունը նպատակ ունի խթանել գիտելիքները, հմտություններն ու իրազեկությունը հաշմանդամության, ճանապարհորդության և ներառական, փորձառական կրթության ոլորտներում:

ԱՎԻԱՏՈՄՍԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ԱՄՐԱԳՐՈՒՄ

Ավիատոմսեր

Aviatomser.com /<http://www.aviatomser.com/> կայքն առաջարկում է աշխարհի բոլոր ուղղություններով թռիչքների և հյուրանոցների առցանց որոնման և գների համեմատման ծառայություններ առցանց տարբերակով:

Այս կայքում հնարավոր է որոնել ավիատոմսեր և հյուրանոցներ, տեղեկանալ դրանց ամենաէժան գների մասին և ամրագրել առցանց ամրագրման համակարգերում:

Հաճախ տրվող հարցեր (ՀՏՀ)

➤ **Ի՞նչ է նշանակում առցանց կամ էլեկտրոնային ավիատոմս**

Էլեկտրոնային ավիատոմսը մեզ բոլորիս ծանոթ սովորական տոմսի էլեկտրոնային տարբերակն է, որտեղ ուղևորի անձնական տվյալները պահվում են էլեկտրոնային տարբերակով ավիափոխադրողների ընդհանուր կենտրոնացված տվյալների բազաներում: Օդային ուղևորափոխադրումներում մեր օրերում օգտագործվում է հիմնականում ավիատոմսերի էլեկտրոնային տարբերակը և միայն ավիաընկերությունների չնչին տոկոսն է տրամադրում թղթե ավիատոմս (որոշ չարտերային չվերթների համար):

➤ **Ինչպե՞ս է կատարվում ավիատոմսերի կամ հյուրանոցների որոնումը**

aviatomser.com որոնման կայքը հանդիսանում է միջնորդ հանգույց, որը կապակցված է միջազգային տուրիստական որոնման և ամրագրման համակարգերի տվյալների շտեմարանին (database): Տվյալների բազայում ներառված են մոտ 800 ավիատոմսերի և հյուրանոցների ամրագրման ծառայություններ, որոնց ծառայությունների արժեքները ցուցադրվում են ըստ կատարված որոնման հարցման: Համապատասխան որոնման ժամանակ որոնման համակարգը կապակցվում է բոլոր ծառայություններին և ստանում տվյալ որոնման հարցման համար արդյունքներ և

ցուցադրում տվյալ ավիատոմսի կամ հյուրանոցի ամենաէժան գները՝ աճման կարգով:

Ամրագրող համակարգերի տվյալների բազայում ներառված են այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ Expedia, airtickets.com, Vayama, TravelGenio, Booking.com, Hotels.com, Tripsta, eDreams և այլ ծառայություններ:

➤ **Ինչպե՞ս ամրագրել ավիատոմսեր առցանց**

aviatomser.com որոնման կայքում կատարվում է միայն ավիատոմսերի որոնման գործողությունը, որի արդյունքում տվյալների բազայից վերադարձվում են ավիատոմսերի և հյուրանոցների տվյալ պահին գործող գներն ու այլ տվյալները: Որոնման արդյունքներում օգտվողին ցուցադրվում են ավիատոմսերի և հյուրանոցների գները ըստ կանխադրված արժույթի: Ցուցադրված արդյունքներից յուրաքանչյուրը հնարավոր է ամրագրել՝ սեղմելով տվյալ արժեքի վրա և անցնելով տվյալ ամրագրման համակարգ, որտեղ էլ կատարվում է ավիատոմսի վերջնական ամրագրումը:

➤ **Ո՞վ է վաճառում առցանց ավիատոմսերը**

Ավիատոմսերի և հյուրանոցների ամրագրումը կատարվում է մի քանի տասնյակ ամրագրման համակարգերում, որոնք կապակցված են մեկ կենտրոնացված տվյալների բազային: Ամրագրման համակարգերը հանդիսանում են երրորդ կողմի ծառայություններ, որոնցից յուրաքանչյուրն առաջարկում է ծառայություններ ըստ սեփական պայմանների: Որոնելով որոշակի ուղղությամբ թռիչքի տոմսեր՝ դուք կարող եք տեսնել այդ տոմսի արժեքները մի քանի ամրագրման համակարգերում, որոնցից ամենահարմար կամ էժան տարբերակը կարող եք ընտրել և գնել տվյալ ամրագրման համակարգում:

➤ **Ինչպե՞ս վճարել ավիատոմսի կամ հյուրանոցի ամրագրման համար**

Ավիատոմսի կամ հյուրանոցի սենյակի ամրագրման համար վճարումը կատարվում է միայն առցանց ամրագրման համակարգերում: Վճարումը կատարվում է VISA կամ MasterCard վճարային քարտերով: Ընդ որում, քարտի արտաբժույթը էական չէ: Եթե ձեր քարտը դրամային է և դուք ամրագրման համակարգում պետք է վճարեք ԱՄՆ դոլարով, ապա վճարման պահին դրամը

կփոխարկվի ԱՄՆ դոլարի ըստ տվյալ պահին ձեր քարտը թողարկող բանկի կամ համակարգի փոխարժեքի:

➤ **Ի՞նչ արժույթով է կատարվում առցանց ավիատոմսի վաճառքը կամ հյուրանոցային համարի ամրագրումը**

aviatomser.com կայքի որոնման ծառայությունները կապակցված են միջազգային տվյալների բազային, որի կողմից առաջարկվում են ավիատոմսերի և հյուրանոցների ամրագրման արժեքները տարբեր արժույթներով: Դուք կարող եք ընտրել արժույթների ցանկից և ձեզ հարմար տարբերակով տեսնել ամրագրման արժեքը, օրինակ՝ ԱՄՆ դոլարով, ռուսական ռուբլիով կամ Եվրոյով: ՀՀ դրամը բացակայում է վերոնշյալ ցանկում:

➤ **Հնարավո՞ր է որոնել ավիատոմս առցանց համակարգերում և գնել այն գրասենյակում միևնույն գնով**

Ոչ: Էլեկտրոնային ավիատոմսերի գները ցուցադրվում են միայն տվյալ ամրագրման համակարգերում գործող արժեքներով և այնտեղ ամրագրման պայմանով և դրանք հնարավոր է գնել այդ արժեքով միայն տվյալ առցանց ամրագրման համակարգում: Առցանց ավիատոմսերի և հյուրանոցների ամրագրման համակարգերի և գրասենյակներում վաճառվող միևնույն ավիատոմսի գները կարող են տարբերվել (սովորաբար 2-5%, սակայն երբեմն տարբերությունը շատ մեծ է լինում հատկապես ավիատոմսերի դեպքում):

➤ **Կարո՞ղ ենք ինքնուրույն գտնել ավիատոմսերը և կապվել ձեր կայքի հետ, որպեսզի դուք ամրագրեք այն կամ օգնեք ամրագրել այն կամ ճշտեք ավիատոմսի արժեքը:**

Ցավոք, մենք չունենք այնպիսի ծառայություն և հնարավորություններ, որպեսզի կարողանանք ամրագրել ձեր ընտրած ավիատոմսը ձեր փոխարեն: Մենք կարող ենք պատասխանել ձեր հարցերին միայն էլփոստով, եթե ունեք հատուկ հարցեր՝ կապված ավիատոմսի կամ հյուրանոցի առցանց ամրագրման հետ: Ավիատոմսերի կամ հյուրանոցների գների հարցումներին մենք չենք պատասխանում, քանի որ առցանց որոնման համակարգը նախատեսված է հենց այդ հարցերին պատասխանելու համար:

➤ **Ավիատոմսը ամրագրելուց հետո ինչպե՞ս օգտագործել այն**

Էլեկտրոնային ավիատոմսերը պարտադիր չէ տպել և ներկայացնել օդանավակայանում: Սակայն ցանկալի է, որ այն ունենաք ձեր ձեռքի տակ՝ տպված վիճակում, սմարտֆոնում կամ պլանշետում: Ավիատոմսի ամրագրումից հետո ձեր տվյալներն ավտոմատ պահվում են կենտրոնացված հիշապահեստում, և օդանավակայանում տոմս ներկայացնելու կարիք այլևս չի լինում, այլ պարզապես պետք է ներկայացնել անձնագիր և անցնել հաշվառում (check-in կամ регистрация): Ավիատոմսն ամրագրելուց հետո, սովորաբար մինչև 30 րոպեի ընթացքում, էլեկտրոնային տոմսի տվյալներն ուղարկվում են ձեր էլփոստի հասցեին, որը նշել եք ավիատոմսն ամրագրելիս:

➤ **Ինչպե՞ս փոխել թռիչքի օրը կամ վերադարձնել ավիատոմսը:**

Էլեկտրոնային ավիատոմսերի վերադարձը կամ թռիչքի օրվա փոփոխությունը կատարվում է այն համակարգում, որտեղից կատարվել է ամրագրումը: Որպես կանոն, ավիատոմսի վերադարձի կամ փոփոխության դեպքում գանձվում են տուգանքներ (չափը կախված է նրանից, թե որքան վաղ եք վերադարձնում ավիատոմսը կամ փոխում դրա օրը): Յուրաքանչյուր ավիաընկերություն ունի ավիատոմսերի վերադարձի կամ փոփոխության սեփական պայմաններն ու քաղաքականությունը:

➤ **Կարո՞ղ եմք վստահ լինել, որ հյուրանոցն ամրագրելուց հետո մենք կստանանք պատշաճ մակարդակի սպասարկում:**

Հյուրանոցին սենյակներ ամրագրելիս հատկապես կարևոր է ուշադրություն դարձնել այդ հյուրանոցի մասին կարծիքներին, քանի որ երբեմն (սակայն ոչ շատ հաճախ) հյուրերը ստանում են սպասվածից տարբերվող կամ ցածր մակարդակի հյուրանոցային սպասարկում: Օրինակ, չի՞ կարելի պարզապես բարձր գնից էլնելով վստահ լինել, որ հյուրանոցում սպասարկումը գերբարձրակարգ է: Նույն կերպ, եթե հյուրանոցի սենյակի արժեքը ցածր է, չի կարելի վստահորեն մտածել, որ այնտեղ սպասարկման մակարդակը գրոյական է:

➤ **Առկա է արժեքների տարբերություն ձեր կայքի և ամրագրման կայքում ցուցադրվող արժեքների միջև: Ինչպե՞ս վարվել**

Եթե նկատել եք մեր կայքում ստացված արժեքի և ամրագրման ծառայության արժեքի խիստ բարձր տարբերություն, ապա

հարկավոր է խուսափել տվյալ ամրագրման ծառայությունից կամ նորից կատարել որոնում և համոզվել արժեքի ճշտության մեջ: Այդպիսի դեպքերը կարող են հանդիպել տվյալների բազայի հնարավոր թերի աշխատանքի կամ ամրագրման համակարգի կողմից ուղարկվող տվյալների ուշացման, հյուրանոցի կամ ավիաընկերության տվյալների թարմացման կամ ձեր կապի արագության արդյունքում: Այնուամենայնիվ, այդպիսի դեպքեր հանդիպում են ծայրահեղ հազվադեպ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ավիատոմսերի գները կարող են տարբեր լինել ինչպես տարբեր տուրիստական գրասենյակներում, այնպես էլ առցանց տարբերակով: Որպես կանոն, առցանց ավիատոմսերի գներն ավելի էժան են լինում, քան սովորաբար՝ տուրիստական գրասենյակներում:

Հյուրանոցներ

<http://www.hoteliium.am/> կայքի համակարգի միջոցով կատարվում է հյուրանոցների ամրագրման ծառայությունների գների համեմատում: Որոշելով հյուրանոցներ [hoteliium.am](http://www.hoteliium.am/) կայքում՝ դուք կտեսնեք առցանց ամրագրման համար առավել մատչելի տարբերակները: Կայքի համակարգը հյուրանոցների գներին չի ավելացնում կոմիսիոն վճարներ, ինչը նշանակում է, որ օգտատերերը կարող եք որոնել և գտնել ամենաեժան գնով հյուրանոցները և՛ Հայաստանում, և՛ արտերկրում:

<http://www.hyuranocner.am/> կայքում կարելի է որոնել և ամրագրել հյուրանոցներ աշխարհի ամենահայտնի քաղաքներում: Այս կայքում ճանապարհորդներն ու զբոսաշրջիկները կարող են որոնել և ամրագրել ամենաեժան գնով հյուրանոցներ կայքէջի որոնման համակարգի օգնությամբ: Էժան հյուրանոցների գները գտնելու համար կարելի է օգտվել հյուրանոցների ուղեցույցից – ընտրել ուղղությունը, մուտքագրել ճամփորդության միջակայքը, այնուհետև դիտել տվյալ օրերի համար առաջարկվող բոլոր հյուրանոցների գները և այլ մանրամասներ:

Ինչպե՞ս ամրագրել հյուրանոցային սենյակ առցանց

Հյուրանոցներ ամրագրելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները.

- Լրացնել առցանց ամրագրման վանդակները, որտեղ անհրաժեշտ է նշել այն քաղաքը (*city or hotel name*), որտեղ պատրաստվում եք մեկնել (անգլերեն տառերով), ապա ժամանման (*check-in*) և դուրս գալու (*check-out*) ամսաթվերը, ինչպես նաև հյուրերի քանակը (*guests*):
- Տվյալները լրացնելուց հետո սեղմեք FIND
- Սպասել, մինչև համակարգը կգտնի տվյալ քաղաքի հյուրանոցները:
- Ընտրել առավել հարմար տարբերակը
- Լրացնել հյուր(եր)ի տվյալները ամենայն ճշտությամբ
- Կատարել վճարում ձեզ հարմար տարբերակով (VISA կամ Master Card վճարային քարտերով)
- Ստանալ հաղորդագրություն ձեր կողմից նշված էլփոստի հասցեին (email address), որի հետո կարող եք նշված օրը և ժամին մեկնել ամրագրված հյուրանոց:

ԵՂԵՔ ՈՒՇԱՂԻՐ

Հյուրանոցներ ամրագրելիս ծանոթացեք տվյալ ամրագրումն իրականացնող ծառայության և հյուրանոցի պայմաններին՝ կապված ամրագրման ամսաթվերի, հյուրերի քանակի փոփոխության, ինչպես նաև ամրագրման չեղարկման հետ: Հետագա թյուրիմացություններից խուսափելու համար ուշադրություն դարձրեք ամրագրող ծառայության բոլոր պայմաններին:



**Տեղեկատու-ուղեցույցի հեղինակային իրավունքը
պատկանում է «ԱԳԱԹ» ՀԿ-ին**

Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի 3114, Բաղրամյան 17

Հեռախոս՝ (+374) 312 41254

Ֆաքս՝ (+374) 312 42261

Բջջային՝ (+374) 77 043 042

Էլ հասցե՝ agate.ngo@gmail.com

Վեբ կայք՝ www.agatengo.org

www.facebook.com/agate.ngo